Բարի ճանապարհ

Նպատակ:

Նպաստել ֆիզիկական և մտավոր հատուկ կարիքներ ունեցող երեխաների ինտեգրմանը հասարակության մեջ, ինչպես նաև ապահովել անհրաժեշտ վերականգնողական թերապիաներին կանոնավոր հաճախումը:

Գործողություններ:

Ձեռք բերել հարմարեցված մեքենա, որը կծառայի Մարտունու հեռավոր գյուղերում բնակվող հատուկ կարիքներ ունեցող երեխաներին «Ոսկեփորիկ» մանկական վերականգնողական կենտրոն տեղափոխելու համար:

Ծրագրի նկարագրություն:

Ըստ **UNICEF-ի «Խոսքը ներառման մասին է» 2012 թ.-ի զեկույցի** Գեղարքունիքի մարզի հաշմանդամություն ունեցող երեխաների 21%-ը դպրոց չի հաճախում, իսկ Մարտունին մարզի խոշորագույն շրջաններից է՝ շրջապատված 17 գյուղերով, որտեղ գրանցված են 307 համշմանդամություն ունեցող երեխա և առնվազն կրկնակի թվով երեխաներ էլ նույնիսկ գրանցված/հետազոտված/կամ ախտորոշված չեն:

2017 թ-ին «Ոսկեփորիկ» -ի դեռևս փոքրիկ թիմը Մարտունի քաղաքում հիմնադրեց գեղագիտության զարգացման կենտրոնը, որը նպատակ ուներ արվեստի միջոցով կրթել և գեղարվեստական հմտություններ զարգացնել Մարտունու երեխաների մոտ: Սակայն կարճ ժամանակ անց «Ոսկեփորիկ» -ի թիմը բացահայտեց, որ

Մարզում կան մեծ թվով հաշմանդամություն ունեցող երեխաներ, ովքեր զրկված են որևէ վերականգնողական ու ֆիզիոթերապեւտիկ բուժումից: Այս իրավիճակը ստիպեց փոխել կենտրոնի ուղղվածությունը և 2018 թ.-ից մինչև այսօր «Ոսկեփորիկ» -ը գործում է որպես մանկական վերականգնողական կենտրոն և ունի 450 շահառու: Ավելին, վերջինս ՀՀ առողջապահության նախարության կողմից ստացավ Գեղարքունիքի մարզի, Մարտունի քաղաքի արտահիվանդանոցային մանկական վերականգնողական կենտրոնի որակավորում և այսուհետ կարող է ընդունել ավելի մեծ թվով շահառուներ:

Այն մոդելը, որը գործածում է «Ոսկեփրիկ»-ի թիմը իր արդյունավետությունն ապացուցել է բազմաթիվ փուլերով, նույնիսկ COVID-19 համավարակի ամենաբուռն շրջանում, երբ ամեն ինչ փակ էր, այդ թվում և բոլոր կենտրոնները, «Ոսկեփորիկ»-ի շահառուները ոչ մի քայլ հետընթաց չեն ունեցել իրենց արդյունքներում, ինչը առանձնահատուկ մոտեցման հետևանք է, քանի որ «Ոսկեփորիկ»-ում սկզբնական հիմնային և ինտենսիվ թերապիաներից զատ վերապատրաստվում են նաև շահառու երեխաների ծնողները, ովքեր, վերապատրացտվելուց հետո, անձամբ են իրականացնում իրենց երեխաների թերապիան՝ մասնագետների վերահսկողությամբ: Այս յուրահատուկ մոտեցումը դրդում է ծնողներին ամբողջությամբ ներգրավվել երեխայի բուժման գործընթացում, դառնալ մեկ թիմ և գնահատել ամեն մի փոքր առաջընթաց: Եվ հենց այդ մոտեցման շնորհիվ կարանտինի ընթացում ծնողները ի վիճակի եղան շարունակել թերամիաները իրենց տներում:

«Ոսկեփորիկ»-ն ունի նաև հասարակությանը կրթելու և դաստիարակելու առաքելություն, ինչը նույնպես իրականացնում է գերազանց կերպով՝ երկկողմանի համերաշխ ինտեգրում իրականացնելով հաշմանդամություն ունեցող երեխաների և հասարակության միջև:

«Ոսկեփորիկ» կենտրոնը գտնվելով Մարտունի քաղաքում սպասարկում է քաղաքի և շրջակա գյուղերի շուրջ 450 երեխաների, որոնց մեծ մասը, ցավոք, ապրում են սոցիալական ոչ բավարար պայմաններում և երեխաներին կենտրոն հասցնել ու հետ վերադարձնելը հրատապ լուծման կարիք ունեցող խնդիր է: Մինչ այժմ տեղափոխումը իրականացվում է տաքսիների, երթուղայինների եւ այլ ոչ կանոնավոր փոխադրման միջոցներով, ինչը խաթարում է երեխաների բուժման սահուն ընթացքը և պահանջում է հավելյալ ծախսեր: Մեկ այլ խնդիր է նաեւ այն, որ շատ հաճախ այդ փոխադրող միջոցները հարմարեցված չեն լինում անվասայլակներով երեխաների համար:

Մարտունու այս կենտրոն այցելելուց եւ կատարված հսկայական աշխատանքը տեսնելուց հետո «Այո» թիմը որոշում է կայացրել աջակցել «Ոսկեփորիկ»-ի կենտրոնին և ձեռք բերել հարմարեցված մեքենա, որը կիրականացնի հաշմանդամություն ունեցող 200 երեխաների կանոնավոր և ապահով տեղափոխումը, որը անշուշտ կնպաստի ավելի արդյունավետ եւ արագ վերականգնմանը՝ հասնելով նորանոր հաջողողությունների: Ավելին, մեքենան ձեռք բերելուն պես, Մարտունու քաղաքային իշխանությունները պարտավորվել են ապահովել վառելիքի, սպասարկան ու վարորդի վարձատրման ծախսերը, ինչը նախաձեռնությունն էլ ավելի կայուն է դարձնում:

Աջակցելով այս ծրագրին՝ դրական ազդեցություն կթողնենք մի հսկայական շղթայի վրա՝ նպաստելով երեխաների վերականգնմանն ու ինտեգրմանը, ծնողներին կրթելու և հմտություններով զինելու պրոցեսին, ինչպես նաև հասարակության արժեքային ընկալումները փոխելու կարևոր գործին:

Բյուդջը

Ինչ	Քանակ	Ընդամենը ՀՀ դրամ
Mitsubishi Van	1	7,263,000
Մեքենայի թեքահարթակ + փոխադրում	1	387,360
Վարորդի տարեկան աշխատավարձ *ֆինանսավորվելու է «Ոսկեփորիկ»-ի կողմից*	1	1,452,600
Վառելիք մեկ տարվա համար *(ֆինանսավորվելու է Մարտունու քաղաքապետարանի կողմից)*	1	1,065,240

Ընդհանուր ծախս

Փոխարժեք 1 ԱՄՆ դոլար = 484.2 ՀՀ դրամ

7,650,360 Դ